

ԴԵՄՊԱՆ

Gz.: WZ 1445.00#00085 Büroabkommen

Պարոն նախարար,

վկայակոչելով Տեխնիկական համագործակցության մասին Գերմանիայի Դաշնային Հանրապետության Կառավարության և Հայաստանի Հանրապետության Կառավարության միջև 1998թ. հուլիսի 27-ին կնքված համաձայնագիրը՝ պատիվ ունեմ Գերմանիայի Դաշնային Հանրապետության Կառավարության անունից Ձեզ առաջարկելու գերմանական Միջազգային համագործակցության ընկերություն (ՄՀԸ/GIZ) ՍՊԸ-ի և Վերականգնման վարկերի քանկի (ՎՎԲ/KfW) տեղական գրասենյակներ հիմնելու վերաբերյալ հետևյալ Համաձայնագիրը.

1. Գերմանիայի Դաշնային Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև զարգացման համագործակցությունը սատարելու նպատակով Երևանում կարող են հիմնվել  
ա) Միջազգային համագործակցության ընկերության տեղական գրասենյակ, այսուհետ՝ «ՄՀԸ գրասենյակ», և

Նորին Գերագանցություն  
Հայաստանի Հանրապետության  
արտաքին գործերի նախարար  
պարոն Արարատ Միրզոյանին  
Երևան

բ) Վերականգնման վարկերի բանկի տեղական գրասենյակ, այսուհետ՝ «ՎՎԲ գրասենյակ»:

2. ՄՀԸ գրասենյակն աջակցում է Գերմանիայի Դաշնային Հանրապետության անունից Տեխնիկական համագործակցության շրջանակում նախատեսված ծրագրերի կատարմանն ու կառավարմանը և ներկայացնում է ՄՀԸ-ն Հայաստանում: ՄՀԸ գրասենյակը կարող է կատարել նաև նախատեսված ծրագրերից դուրս մասնագիտական և վարչարարական այլ գործառույթներ, ինչպես նաև երկրին առնչվող և տարածաշրջանային բնույթի հանձնարարություններ: Գրասենյակն իրավունք ունի սարքավորումներ և վարչարարական աջակցություն տրամադրելու նաև Գերմանիայի Դաշնային Հանրապետության Կառավարության հանձնարարությամբ միջոցառումներ իրականացնող այլ կատարող կազմակերպությունների (մասնավորապես՝ կատարող կազմակերպություններ Ֆիզիկատեխնիկական դաշնային ինստիտուտին (ՖՏԴԻ/PTB) և Երկրաբանական հետազոտությունների և բնական պաշարների դաշնային ինստիտուտին (ԵՀԲՊԴԻ/BGR):

3. ՎՎԲ գրասենյակը գործընկեր պետությանը և կատարող գործընկեր կազմակերպություններին օգնում է նախապատրաստել և իրականացնել Ֆինանսական համագործակցության շրջանակում Գերմանիայի Դաշնային Հանրապետության կողմից խրախուսվող ծրագրերը և ներկայացնում է ՎՎԲ-ն Հայաստանում: ՎՎԲ գրասենյակը կարող է կատարել նաև նախատեսված ծրագրերից դուրս այլ մասնագիտական և վարչարարական գործառույթներ, ինչպես նաև երկրին առնչվող և տարածաշրջանային բնույթի այլ հանձնարարականներ, որոնք վերաբերում են ծրագրերին: Գրասենյակն իրավունք ունի սարքավորումներ և վարչարարական աջակցություն տրամադրելու նաև Գերմանիայի Դաշնային Հանրապետության Կառավարության հանձնարարությամբ միջոցառումներ իրականացնող այլ

կատարող կազմակերպությունների (մասնավորապես՝ կատարող կազմակերպություններ ՖՏԴԻ/PTB-ին և ԵՀԲՊԴԻ/BGR-ին):

4. Գերմանիայի Դաշնային Հանրապետության Կառավարությունն իր ծառայությունները մատուցում է կատարող կազմակերպություններ ՄՀԸ-ի ու ՎՎԲ-ի և իր հանձնարարությամբ գործող այլ կատարող կազմակերպությունների (մասնավորապես՝ ՖՏԴԻ/PTB-ի և ԵՀԲՊԴԻ/BGR-ի) միջոցով, իսկ Հայաստանի Հանրապետության Կառավարությունն այդ կատարող կազմակերպությունների գործընկեր է նշանակում Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը:
5. 1998 թվականի հուլիսի 27-ի շրջանակային համաձայնագրի դրույթները ՄՀԸ գրասենյակի համար գործում են ուղղակիորեն, ՎՎԲ գրասենյակի համար՝ համապատասխանաբար: Բովանդակային շեղումների դեպքում գործում է գրասենյակի համար առավել նպաստավոր կարգավորումը:
6. Գերմանիայի Դաշնային Հանրապետության Կառավարությունը մատուցում է հետևյալ ծառայությունները.
  - ա) ստանձնում է գրասենյակների համար անհրաժեշտ բոլոր ներդրումային և գործառնական ծախսերը,
  - բ) ստանձնում է գրասենյակների գործունեությունն ապահովող անձնակազմի (ինչպես գործուղված, այնպես էլ տեղացի կամ տարածաշրջանային մասնագետների) ծախսերը:
7. Հայաստանի Հանրապետության Կառավարությունը գրասենյակների գործունեության առնչությամբ մատուցում է հետևյալ ծառայությունները:

- ա) Երաշխավորում է, որ Հայաստանի Հանրապետության պետական մարմինները պատշաճ հոգածությամբ ապահովեն գրասենյակների անվտանգությունն ու պաշտպանությունը:
- բ) Գրասենյակների համար ներմուծված պարագաները, այդ թվում՝ սարքերն ու ավտոմեքենաները, ազատում է ներմուծման ու արտահանման բոլոր տեսակի տուրքերից, նավահանգստային ու պահեստային վճարներից, ինչպես նաև այլ պետական վճարներից, և երաշխավորում է դրանց անհապաղ բացթողումը:
- գ) ՄՀԸ և ՎՎԲ կատարող կազմակերպություններին և նրանց գրասենյակներին ազատում է բոլոր տեսակի ուղղակի հարկերից: Գրասենյակների այն աշխատողները, որոնք չեն պատկանում Գերմանիայի Դաշնային Հանրապետության Կառավարության միջոցներով աշխատավարձ կամ նպաստներ ստացող գործուղված մասնագետների խմբին, ազատված չեն անձնական եկամտահարկից կամ այլ համեմատելի հարկերից, որոնք գանձվում են իրենց՝ հարկման ենթակա եկամուտից:
- դ) ՄՀԸ և ՎՎԲ կատարող կազմակերպությունների կամ նրանց գրասենյակների՝ Հայաստանի Հանրապետությունում ձեռք բերած պարագաները և ստացած ծառայություններն ազատում է Հայաստանի Հանրապետությունում գանձվող շրջանառության հարկերից կամ համանման այլ անուղղակի հարկերից: Ազատումը կարող է լինել փոխհատուցման կամ այդ հարկերից ազատման եղանակով:
- ե) Հաստատում է կատարող կազմակերպությունների կամ գրասենյակների՝ հեռահաղորդակցային կապերի, այդ թվում՝ ռադիոկապի և արբանյակային կապուղիների միացման վերաբերյալ դիմումները, օգնում է կատարել բոլոր անհրաժեշտ գրանցումները:
- զ) Աջակցում է կատարող կազմակերպությունների դիմումներին, որոնք վերաբերում են գրասենյակների աշխատակիցների աշխատանքի

թույլտվություններին, ինչպես նաև կացության անհրաժեշտ  
թույլտվություններին և վիզաներին:

է) Գործուղված մասնագետներին և նրանց հետ նույն հարկի տակ ապրող  
ընտանիքի անդամներին անվճար և անգրավ հիմունքներով տրամադրում  
է անհրաժեշտ վիզա, աշխատանքի և կացության թույլտվություն:  
Ընտանիքի անդամ են համարվում մասնագետների ամուսինները,  
գրանցված զուգընկերները, ոչ գրանցված զուգընկերները և երեխաները,  
որոնք այդ մասնագետների հետ Հայաստանի Հանրապետությունում  
ապրում են միննույն մշտական հարկի տակ, ինչպես նաև այն անձինք,  
որոնք ապրում են մասնագետի հարկի տակ, և որոնց հանդեպ մասնագետը  
ունի իրավական և բարոյական պարտավորություններ, կամ որոնց հետ  
դեռևս Հայաստանի Հանրապետություն գործուղման պահին ապրել է  
միննույն հարկի և խնամքի տակ, և այդ անձինք չեն համարվում  
մասնագետի կողմից վարձված աշխատող: Երեխաներ համարվում են նաև  
մասնագետի, նրա ամուսնու, գրանցված զուգընկերոջ կամ չգրանցված  
զուգընկերոջ որդեգրած երեխաները, ինչպես նաև նրանց խնամքի տակ  
գտնվող կամ խորթ զավակները:

ը) Ապահովում է ՄՀԸ մասնագետների և նրանց հետ նույն հարկի տակ ապրող  
ընտանիքի անդամների՝ 1998 թվականի հուլիսի 27-ի շրջանակային  
համաձայնագրով սահմանված բոլոր իրավունքները. միննույն  
իրավունքները համապատասխան կիրառությամբ ապահովում է նաև  
ՎՎԲ գործուղված մասնագետների և նրանց հետ նույն հարկի տակ ապրող  
ընտանիքի անդամների, ինչպես նաև, հարկ եղած դեպքում, Գերմանիայի  
Դաշնային Հանրապետության Կառավարության հանձնարարությամբ  
գործող այլ կատարող կազմակերպությունների գործուղված  
մասնագետների և նրանց հետ նույն հարկի տակ ապրող ընտանիքի  
անդամների համար:

8. Գրասենյակների համար առաքված պարագաները մնում են որպես համապատասխանաբար ՄՀԸ և ՎՎԲ գերմանական կատարող կազմակերպությունների սեփականություն:
9. Սույն Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման վերաբերյալ վեճերը Համաձայնագրի կողմերը լուծում են բարեկամաբար՝ հանդիպումների կամ բանակցությունների միջոցով:
10. Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով: Կողմերից յուրաքանչյուրը կարող է ցանկացած ժամանակ լուծել այն՝ այդ մասին գրավոր ծանուցելով դիվանագիտական ճանապարհով: Լուծումն ուժի մեջ է մտնում ծանուցումն ստանալու օրվանից տասներկու ամիս անց՝ ժամկետի ավարտին հաջորդող ամսվա առաջին օրը:
11. Համաձայնագրի՝ Միավորված ազգերի կազմակերպության քարտուղարությունում ՄԱԿ խարտայի 102-րդ հոդվածով նախատեսված գրանցումը Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուն պես իրականացնում է Հայաստանի Հանրապետության Կառավարությունը: ՄԱԿ քարտուղարությունից հաստատում ստանալուց անմիջապես հետո Հայաստանի Հանրապետությունը Համաձայնագրի մյուս կողմին ծանուցում է կատարված գրանցման մասին՝ նշելով գրանցման թիվը:
12. Սույն Համաձայնագիրը կնքվում է գերմաներեն, հայերեն և անգլերեն, ընդ որում՝ բոլոր շարադրանքները հավասարազոր են: Գերմաներեն և հայերեն շարադրանքների տարրնթերցումների դեպքում վճռորոշ է անգլերեն շարադրանքը:

Եթե Հայաստանի Հանրապետության Կառավարությունը իր համաձայնությունը հայտնի 1 – 12-րդ կետերով արված առաջարկներին, սույն հայտագիրը և Ձերդ Գերագանցության՝ Ձեր Կառավարության համաձայնությունն արտահայտող պատասխան հայտագիրը կկազմեն Համաձայնագիր մեր երկու Կառավարությունների միջև, որն ուժի մեջ կմտնի այն օրը, երբ Հայաստանի Հանրապետության Կառավարությունը Գերմանիայի Դաշնային Հանրապետության Կառավարությանը կձանուցի, որ Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական պահանջները կատարված են: Որոշիչ է ծանուցումը ստանալու ամսաթիվը:

Ընդունեք խնդրեմ, պարոն նախարար, խորին հարգանքներիս հավաստիքը:



Yerevan, 13 December 2022

Excellency,

I have the honour to refer to the Agreement on Technical Cooperation between the Government of the Federal Republic of Germany and the Government of the Republic of Armenia, dated 27 July 1998, and to propose on behalf of the Government of the Federal Republic of Germany that the following Arrangement on the Establishment of Local Offices of the Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH and of Kreditanstalt für Wiederaufbau (KfW) be concluded:

1. With a view to supporting development cooperation between the Federal Republic of Germany and the Republic of Armenia,
  - a) a local GIZ office, hereinafter referred to as the “GIZ Office”, and
  - b) a local KfW office, hereinafter referred to as the “KfW Office”,may be established in Yerevan.
  
2. The GIZ Office shall support the implementation and steering of projects on behalf of the Federal Republic of Germany within the framework of technical cooperation and represent GIZ locally. The GIZ Office may undertake technical and administrative activities relating to more than one project as well as tasks in the host country and region. It shall be entitled to provide facilities and administrative support for further

His Excellency  
Mr. Ararat Mirzoyan  
Minister of Foreign Affairs  
of the Republic of Armenia  
Yerevan



implementing organisations (in particular the implementing organisations the National Metrology Institute (PTB) and the Federal Institute for Geosciences and Natural Resources (BGR)) charged by the Government of the Federal Republic of Germany with the implementation of projects.

3. The KfW Office shall support the partner country and the implementing partners with regard to the preparation and implementation of financial cooperation projects supported on behalf of the Government of the Federal Republic of Germany and represent KfW locally. In connection with the projects, the KfW Office may undertake technical and administrative activities relating to more than one project as well as tasks in the host country and region. It shall be entitled to provide facilities and administrative support for further implementing organisations (in particular the implementing organisations PTB and BGR) charged by the Government of the Federal Republic of Germany with the implementation of projects.
4. The Government of the Federal Republic of Germany shall make its contributions through the implementing organisations GIZ and KfW and other implementing organisations (in particular the implementing organisations PTB and BGR) charged by the Government; the Government of the Republic of Armenia shall charge the Ministry of Economy to serve as contact agency for these implementing organisations.
5. The provisions of the aforementioned Framework Agreement on Technical Cooperation of 27 July 1998 shall apply directly to the GIZ Office and mutatis mutandis to the KfW Office. Should the terms differ in substance, the term more favourable to the Office shall apply.
6. The Government of the Federal Republic of Germany shall make the following contributions:
  - a) It shall meet all investment and operating costs of the Offices.
  - b) It shall meet the costs of the staff (seconded experts as well as local and regional experts) employed to implement the activities of the Offices.

7. The Government of the Republic of Armenia shall make the following contributions in connection with the activities of the Offices:
- a) It shall ensure that the authorities of the Republic of Armenia act with the requisite care to guarantee the security and protection of the Offices.
  - b) It shall exempt the material goods, including equipment and motor vehicles, imported for the Offices from all import and export duties, harbour dues, storage fees and other public charges, and shall ensure that these inputs are released without delay.
  - c) It shall exempt the German implementing organisations GIZ and KfW and their Offices from all direct taxes. Offices' employees, who are not seconded experts with the remuneration paid and grants made to them from the funds of the Government of the Federal Republic of Germany, are not exempt from personal income tax or equivalent taxes imposed on their taxable income.
  - d) It shall exempt the material goods and services procured in the Republic of Armenia by the German implementing organisations GIZ and KfW or their Offices from value-added taxes or similar indirect taxes levied in the Republic of Armenia. The exemption may be effected by reimbursing or waiving any such taxes.
  - e) It shall approve applications from the implementing organisations or the Offices for the installation of telecommunications links, including radio and satellite, and endorse all necessary registrations.
  - f) It shall support applications from the implementing organisations for work permits and any necessary residence permits and visas for employees of the Offices.
  - g) It shall issue to the seconded experts and the members of their families belonging to their households the necessary visas, work permits and residence permits free of charge and without requiring security.

Family members are: spouses, registered partners, unmarried partners and children of an expert forming part of the expert's permanent household in the Republic of Armenia, as well as other persons belonging to the expert's household if the expert lives with these persons in recognition of legal or moral obligations or has been living with them in their household or care at the time of his/her secondment to the Republic of Armenia and these persons are not employed by the expert; children may also be

the adopted children, foster children or stepchildren of the expert, his/her spouse, registered partner or unmarried partner.

- h) It shall grant the experts seconded by GIZ and members of their families belonging to their households all the privileges referred to in the aforementioned Framework Agreement on Technical Cooperation of 27 July 1998; it shall grant the experts seconded by KfW and members of their families belonging to their households as well as the experts seconded by any other organisations charged with implementation by the Government of the Federal Republic of Germany and members of their families belonging to their households the same privileges, applying the aforementioned Agreement *mutatis mutandis*.
8. The material goods supplied for the Offices shall remain the property of the German implementing organisations GIZ and KfW.
9. Any disputes concerning the interpretation or application of this Arrangement shall be settled amicably by the Contracting Parties by means of talks or negotiations.
10. This Arrangement shall be concluded for an indefinite period. Either Contracting Party may terminate it in writing through diplomatic channels at any time. The termination shall take effect on the first day of the month following a twelve-month period from receipt of the notification.
11. Registration of this Arrangement with the Secretariat of the United Nations, in accordance with Article 102 (1) of the United Nations Charter, shall be initiated by the Government of the Republic of Armenia immediately following its entry into force. The other Contracting Party shall be informed of registration, and of the UN registration number, as soon as this has been confirmed by the Secretariat.
12. This Arrangement shall be concluded in the German, Armenian and English languages, all three texts being authentic. In case of divergent interpretations of the German and Armenian texts, the English text shall prevail.

If the Government of the Republic of Armenia agrees to the proposals contained in paragraphs 1 to 12 above, this Note and Your Excellency's Note in reply thereto expressing your Government's agreement shall constitute an Arrangement between our two Governments, which shall enter into force on the date on which the Government of the Republic of Armenia has informed the Government of the Federal Republic of Germany that the national requirements for such entry into force have been fulfilled. The relevant date shall be the day on which the communication is received.

Accept, Excellency, the assurance of my highest consideration.





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ  
ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
MINISTRY OF FOREIGN AFFAIRS  
OF THE REPUBLIC OF ARMENIA

1111/7681-23

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունն իր հարգանքն է հավաստում Հայաստանի Հանրապետությունում Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպանությանը և պատիվ ունի հայտնելու Դեսպանության 2022 թվականի դեկտեմբերի 13-ի Gz:WZ 1445.00#00085 Büroabkommen հայտագրի ստացման մասին, որում ասված է հետևյալը՝

«Պարոն նախարար,  
վկայակոչելով Տեխնիկական համագործակցության մասին Գերմանիայի Դաշնային Հանրապետության Կառավարության և Հայաստանի Հանրապետության Կառավարության միջև 1998թ. հուլիսի 27-ին կնքված համաձայնագիրը՝ պատիվ ունենմ Գերմանիայի Դաշնային Հանրապետության Կառավարության անունից Ձեզ առաջարկելու գերմանական Միջազգային համագործակցության ընկերություն (ՄՀԸ/GIZ) ՍՊԸ-ի և Վերականգնման վարկերի բանկի (ՎՎԲ/KfW) տեղական գրասենյակներ հիմնելու վերաբերյալ հետևյալ Համաձայնագիրը.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ  
Ք. ԵՐԵՎԱՆ

1. Գերմանիայի Դաշնային Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև զարգացման համագործակցությունը սատարելու նպատակով Երևանում կարող են հիմնվել

ա) Միջազգային համագործակցության ընկերության տեղական գրասենյակ, այսուհետ՝ «ՄՀԸ գրասենյակ», և

բ) Վերականգնման վարկերի բանկի տեղական գրասենյակ, այսուհետ՝ «ՎՎԲ գրասենյակ»:

2. ՄՀԸ գրասենյակն աջակցում է Գերմանիայի Դաշնային Հանրապետության անունից Տեխնիկական համագործակցության շրջանակում նախատեսված ծրագրերի կատարմանն ու կառավարմանը և ներկայացնում է ՄՀԸ-ն Հայաստանում: ՄՀԸ գրասենյակը կարող է կատարել նաև նախատեսված ծրագրերից դուրս մասնագիտական և վարչարարական այլ գործառույթներ, ինչպես նաև երկրին առնչվող և տարածաշրջանային բնույթի հանձնարարություններ: Գրասենյակն իրավունք ունի սարքավորումներ և վարչարարական աջակցություն տրամադրելու նաև Գերմանիայի Դաշնային Հանրապետության Կառավարության հանձնարարությամբ միջոցառումներ իրականացնող այլ կատարող կազմակերպությունների (մասնավորապես՝ կատարող կազմակերպություններ Ֆիզիկատեխնիկական դաշնային ինստիտուտին (ՖՏԴԻ/PTB) և Երկրաբանական հետազոտությունների և բնական պաշարների դաշնային ինստիտուտին (ԵՀԲՊԴԻ/BGR):

3. ՎՎԲ գրասենյակը գործընկեր պետությանը և կատարող

գործընկեր կազմակերպություններին օգնում է նախապատրաստել և իրականացնել Ֆինանսական համագործակցության շրջանակում Գերմանիայի Դաշնային Հանրապետության կողմից խրախուսվող ծրագրերը և ներկայացնում է ՎՎԲ-ն Հայաստանում: ՎՎԲ գրասենյակը կարող է կատարել նաև նախատեսված ծրագրերից դուրս այլ մասնագիտական և վարչարարական գործառույթներ, ինչպես նաև երկրին առնչվող և տարածաշրջանային բնույթի այլ հանձնարարականներ, որոնք վերաբերում են ծրագրերին: Գրասենյակն իրավունք ունի սարքավորումներ և վարչարարական աջակցություն տրամադրելու նաև Գերմանիայի Դաշնային Հանրապետության Կառավարության հանձնարարությամբ միջոցառումներ իրականացնող այլ կատարող կազմակերպությունների (մասնավորապես՝ կատարող կազմակերպություններ ՖՏԴԻ/PTB-ին և ԵՀԲՊԴԻ/BGR-ին):

4. Գերմանիայի Դաշնային Հանրապետության Կառավարությունն իր ծառայությունները մատուցում է կատարող կազմակերպություններ ՄՀԸ-ի ու ՎՎԲ-ի և իր հանձնարարությամբ գործող այլ կատարող կազմակերպությունների (մասնավորապես՝ ՖՏԴԻ/PTB-ի և ԵՀԲՊԴԻ/BGR-ի) միջոցով, իսկ Հայաստանի Հանրապետության Կառավարությունն այդ կատարող կազմակերպությունների գործընկեր է նշանակում Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը:

5. 1998 թվականի հուլիսի 27-ի շրջանակային համաձայնագրի դրույթները ՄՀԸ գրասենյակի համար գործում են ուղղակիորեն, ՎՎԲ գրասենյակի համար՝ համապատասխանաբար: Բովանդակային

շեղումների դեպքում գործում է գրասենյակի համար առավել նպաստավոր կարգավորումը:

6. Գերմանիայի Դաշնային Հանրապետության Կառավարությունը մատուցում է հետևյալ ծառայությունները.

ա) ստանձնում է գրասենյակների համար անհրաժեշտ բոլոր ներդրումային և գործառնական ծախսերը,

բ) ստանձնում է գրասենյակների գործունեությունն ապահովող անձնակազմի (ինչպես գործուղված, այնպես էլ տեղացի կամ տարածաշրջանային մասնագետների) ծախսերը:

7. Հայաստանի Հանրապետության Կառավարությունը գրասենյակների գործունեության առնչությամբ մատուցում է հետևյալ ծառայությունները:

ա) Երաշխավորում է, որ Հայաստանի Հանրապետության պետական մարմինները պատշաճ հոգաճությամբ ապահովեն գրասենյակների անվտանգությունն ու պաշտպանությունը:

բ) Գրասենյակների համար ներմուծված պարագաները, այդ թվում՝ սարքերն ու ավտոմեքենաները, ազատում է ներմուծման ու արտահանման բոլոր տեսակի տուրքերից, նավահանգստային ու պահեստային վճարներից, ինչպես նաև այլ պետական վճարներից, և երաշխավորում է դրանց անհապաղ բացթողումը:

գ) ՄՀԸ և ՎՎԲ կատարող կազմակերպություններին և նրանց գրասենյակներին ազատում է բոլոր տեսակի ուղղակի հարկերից: Գրասենյակների այն աշխատողները, որոնք չեն պատկանում Գերմանիայի Դաշնային Հանրապետության Կառավարության միջոցներով աշխատավարձ կամ նպաստներ ստացող գործուղված



մասնագետների խմբին, ազատված չեն անձնական եկամտահարկից կամ այլ համեմատելի հարկերից, որոնք գանձվում են իրենց՝ հարկման ենթակա եկամուտից:

դ) ՄՀԸ և ՎՎԲ կատարող կազմակերպությունների կամ նրանց գրասենյակների՝ Հայաստանի Հանրապետությունում ձեռք բերած պարագաները և ստացած ծառայություններն ազատում է Հայաստանի Հանրապետությունում գանձվող շրջանառության հարկերից կամ համանման այլ անուղղակի հարկերից: Ազատումը կարող է լինել փոխհատուցման կամ այդ հարկերից ազատման եղանակով:

ե) Հաստատում է կատարող կազմակերպությունների կամ գրասենյակների՝ հեռահաղորդակցային կապերի, այդ թվում՝ ռադիոկապի և արբանյակային կապուղիների միացման վերաբերյալ դիմումները, օգնում է կատարել բոլոր անհրաժեշտ գրանցումները:

զ) Աջակցում է կատարող կազմակերպությունների դիմումներին, որոնք վերաբերում են գրասենյակների աշխատակիցների աշխատանքի թույլտվություններին, ինչպես նաև կացության անհրաժեշտ թույլտվություններին և վիզաներին:

է) Գործուղված մասնագետներին և նրանց հետ նույն հարկի տակ ապրող ընտանիքի անդամներին անվճար և անգրավ հիմունքներով տրամադրում է անհրաժեշտ վիզա, աշխատանքի և կացության թույլտվություն: Ընտանիքի անդամ են համարվում մասնագետների ամուսինները, գրանցված զուգընկերները, ոչ գրանցված զուգընկերները և երեխաները, որոնք այդ մասնագետների հետ Հայաստանի Հանրապետությունում ապրում են միևնույն մշտական հարկի տակ, ինչպես նաև այն անձինք, որոնք ապրում են մասնագետի հարկի տակ, և որոնց հանդեպ մասնագետը ունի իրավական և բարոյական պարտավորություններ, կամ որոնց հետ դեռևս

Հայաստանի Հանրապետություն գործուղման պահին ապրել է միևնույն հարկի և խնամքի տակ, և այդ անձինք չեն համարվում մասնագետի կողմից վարձված աշխատող: Երեխաներ համարվում են նաև մասնագետի, նրա ամուսնու, գրանցված զուգընկերոջ կամ չգրանցված զուգընկերոջ որդեգրած երեխաները, ինչպես նաև նրանց խնամքի տակ գտնվող կամ խորթ զավակները:

ը) Ապահովում է ՄՀԸ մասնագետների և նրանց հետ նույն հարկի տակ ապրող ընտանիքի անդամների՝ 1998 թվականի հուլիսի 27-ի շրջանակային համաձայնագրով սահմանված բոլոր իրավունքները. միևնույն իրավունքները համապատասխան կիրառությամբ ապահովում է նաև ՎՎԲ գործուղված մասնագետների և նրանց հետ նույն հարկի տակ ապրող ընտանիքի անդամների, ինչպես նաև, հարկ եղած դեպքում, Գերմանիայի Դաշնային Հանրապետության Կառավարության հանձնարարությամբ գործող այլ կատարող կազմակերպությունների գործուղված մասնագետների և նրանց հետ նույն հարկի տակ ապրող ընտանիքի անդամների համար:

8. Գրասենյակների համար առաքված պարագաները մնում են որպես համապատասխանաբար ՄՀԸ և ՎՎԲ գերմանական կատարող կազմակերպությունների սեփականություն:

9. Սույն Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման վերաբերյալ վեճերը Համաձայնագրի կողմերը լուծում են բարեկամաբար՝ հանդիպումների կամ բանակցությունների միջոցով:

10. Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով:

Կողմերից յուրաքանչյուրը կարող է ցանկացած ժամանակ լուծել այն՝ այդ մասին գրավոր ծանուցելով դիվանագիտական ճանապարհով: Լուծումն ուժի մեջ է մտնում ծանուցումն ստանալու օրվանից տասներկու ամիս անց՝ ժամկետի ավարտին հաջորդող ամսվա առաջին օրը:

11. Համաձայնագրի՝ Միավորված ազգերի կազմակերպության քարտուղարությունում ՄԱԿ խարտայի 102-րդ հոդվածով նախատեսված գրանցումը Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուն պես իրականացնում է Հայաստանի Հանրապետության Կառավարությունը: ՄԱԿ քարտուղարությունից հաստատում ստանալուց անմիջապես հետո Հայաստանի Հանրապետությունը Համաձայնագրի մյուս կողմին ծանուցում է կատարված գրանցման մասին՝ նշելով գրանցման թիվը:

12. Սույն Համաձայնագիրը կնքվում է գերմաներեն, հայերեն և անգլերեն, ընդ որում՝ բոլոր շարադրանքները հավասարազոր են: Գերմաներեն և հայերեն շարադրանքների տարընթերցումների դեպքում վճռորոշ է անգլերեն շարադրանքը:

Եթե Հայաստանի Հանրապետության Կառավարությունը իր համաձայնությունը հայտնի 1 – 12-րդ կետերով արված առաջարկներին, սույն հայտագիրը և Ձերդ Գերազանցության՝ Ձեր Կառավարության համաձայնությունն արտահայտող պատասխան հայտագիրը կկազմեն Համաձայնագիր մեր երկու Կառավարությունների միջև, որն ուժի մեջ կմտնի այն օրը, երբ Հայաստանի Հանրապետության Կառավարությունը Գերմանիայի Դաշնային Հանրապետության Կառավարությանը կծանուցի, որ Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ

ներպետական պահանջները կատարված են: Որոշիչ է ծանուցումը ստանալու ամսաթիվը:

Ընդունեք խնդրեմ, պարոն նախարար, խորին հարգանքներիս հավաստիքը:»

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը պատիվ ունի հայտնելու Հայաստանի Հանրապետությունում Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպանությանը, որ վերոհիշյալ հայտագրի դրույթները ամբողջությամբ ընդունելի են Հայաստանի Հանրապետության կողմից: Դեսպանության հայտագիրը և սույն պատասխան հայտագիրը միասին կկազմեն Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության Կառավարության միջև Համաձայնագիր, որն ուժի մեջ կմտնի այն օրը, երբ Հայաստանի Հանրապետության կառավարությունը կծանուցի, որ Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար ներպետական անհրաժեշտ ընթացակարգերը ավարտված են:

Օգտվելով առիթից՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը վերստին իր խորին հարգանքն է հավաստում Հայաստանի Հանրապետությունում Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպանությանը:

Երևան 15.02.2023թ.



Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2022թ. դեկտեմբերի 13-ին և 2023 թվականի փետրվարի 15-ին հայտագրերի փոխանակման ձևով կնքված «Գերմանական Միջազգային համագործակցության ընկերություն (ԳՄՀԸ/GIZ) ՍՊԸ-ի և Վերականգնման վարկերի բանկի (ՎՎԲ/KFW) տեղական գրասենյակներ հիմնելու վերաբերյալ» համաձայնագրի՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջազգային պայմանագրերի պահոցում (դեպոզիտում) պահվող բնօրինակի նույնական պատճենն է:

**Հայաստանի Հանրապետության  
արտաքին գործերի նախարարության  
միջազգային պայմանագրերի և  
իրավունքի վարչության պետ**



**Նելլի Սարոյան**